Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով վարչական սարքավորումների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

04.11.2026 թվական **ք. Գյումրի**

Օրակարգ - «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/01» ծածկագրով մրցույթի 2-րդ չափաբաժնի Հրավերի վերաբերյալ ստացված հարցման մասին

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները՝ 03.11.2026 թվականին e-AUCTION համակարգի միջոցով ստացվել է հարցում հրավերի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ:

Հարցում՝ «Հարգելի պատվիրատու ACER, կամ (համարժեքը HP,DELL,LENOVO նշված բրենդերից բացի արդյոք ընդունելի է տեղական Հայաստանում արտադրված համարժեք տեխնիկական բնութագրով մոնոբլոկ»

Պարզաբանում հարցման վերաբերյալ

Ղեկավարվելով վերոհիշյալ կարգավորումներով և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից (Հիմք պատասխանատու ստորաբաժանում կողմից 04.11.2026 թվականի գրությունը) տրված եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը քննարկել է ստացված հարցումը և որոշել է տրամադրել հետևյալ պարզաբանումը.

«e-AUCTION համակարգի միջոցով իրականացված հարցմանը ի պատասխան հայտնում ենք, որ գնման առարկա հանդիսացող «Ամբողջը մեկում» (մոնոբլոկ) համակարգչի տեխնիկական բնութագրերով պահանջվում է հստակ համապատասխանություն, և եթե առաջարկվող տեղական (Հայաստանում արտադրված) կամ այլ արտադրության համարժեք տեխնիկայով ապրանքն իր բնութագրերով ամբողջությամբ և անշեղորեն համապատասխանում է հրավերով (տեխնիկական բնութագրով) սահմանված պահանջներին, ապա այն ընդունելի է»:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել հարցման կապակցությամբ տրամադրվող պարզաբանման տեքստը:
2. Հանձնաժողովի քարտուղարին՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ապահովել սույն արձանագրության հրապարակումը տեղեկագրում (առանց հարցումը կատարած մասնակցի տվյալների):

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Իրինա Ջանոյան

Անահիտ Հարությունյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան